ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի 2026թ. մայիսի 27-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 25-ը: Նիստը նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ. Մարգարյանը:

Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման մասին հարց
2. Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Աննա Հակոբջանյանի թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու մասին հարց
3. Ընթացիկ հարցեր

1. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում

1.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտի ատեստավորման մասին հարցը:

1.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 2-րդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Սուսաննա Լևոնի Համբարձումյանի ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ. Հայրապետյանը: Տ.գ.թ., դոցենտ Գ. Հայրապետյանը հայտնեց, որ Սուսաննա Լևոնի Համբարձումյանի «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի դիվերսիֆիկացման հիմնախնդիրները» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Թ. Թորոսյան) ատենախոսության շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում հետազոտական աշխատանքները կենտրոնացած են եղել ատենախոսության տեսական-մեթոդաբանական հիմքերի մշակման և համակարգման վրա: Ամբողջությամբ պատրաստվել և ձևավորվել է ատենախոսության 1-ին գլուխը: Հաշվետու տարվա ընթացքում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ասպիրանտը

դասավանդել է «Միջազգային առևտուր» և «Տնտեսագիտության տեսություն-1» դասընթացների սեմինար պարապմունքները: Հավելեց, որ ասպիրանտը հրատարակած հոդված չունի և նշեց, որ, այդ մտահոգիչ փաստը հաշվի առնելով ու ասպիրանտին պարտավորեցնելով, ամբիոնը կայացրել է որոշում՝ ատեստավորել և միջնորդել ֆակուլտետի գիտխորհրդին հաստատելու այդ որոշումը:

2. Հարց հնչեցրեց տ.գ.դ., պրոֆեսոր Գ. Վարդանյանը՝ ՀՀ արտաքին առևտրի դիվերսիֆիկացման հնարավորությունների առնչությամբ:

3. Ասպիրանտ Ս. Համբարձումյանը հարցին պատասխանեց հակիրճ՝ ատենախոսության 1-ին գլխում կատարված տեսամեթոդաբանական վերլուծության համատեքստում:

4. Դեկան Կ. Խաչատրյանը նշեց, որ անշուշտ մտահոգիչ է այն փաստը, որ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտը հաշվետու տարում գիտական աշխատանք չի հրատարակել և առաջարկեց ատեստավորել՝ հնարավորություն տալով ասպիրանտին ավարտել ատենախոսությունը և հրատարակել անհրաժեշտ 6 հոդվածները: Դեկան Կ. Խաչատրյանը, ամփոփելով քննարկումը, առաջարկեց՝ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ. Հայրապետյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

1.1 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 18.05.2026թ. թիվ 8 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Սուսաննա Լևոնի Համբարձումյանի կատարած աշխատանքը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Սուսաննա Լևոնի Համբարձումյանի (2-րդ տարի) կատարած աշխատանքը համարել բավարար և ատեստավորել:

Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի առկա ասպիրանտն ատեստավորվեց՝ քվեարկության 24 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ արդյունքներով:

1.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման մասին հարցը:

1.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի

վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտները երեքն են՝ Սիսակյան Միհրան Վախթանգի (1-ին տարի), Գևորգյան Ալիսա Արենի (2-րդ տարի), Սարգսյան Սիլվիա Սարգսի (2-րդ տարի):

Տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյանը հայտնեց, որ Միհրան Վախթանգի Սիսակյանի «Պետական պարտքի կառավարման կառուցակարգերի բարելավման ուղիները ՀՀ տնտեսական զարգացման համատեքստում» թեմայով (ղեկավար տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյան) ատենախոսության շրջանակներում ուսումնասիրվել է մասնագիտական գրականություն և հանդիպումներ են կայացել թեմային առնչվող ոլորտի մասնագետների հետ: Մասնակցել է ասպիրանտների համար նախատեսված պարտադիր և ընտրովի դասընթացների մի մասին և կուտակել է 20 կրեդիտ:

Տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյանը հայտնեց, որ Ալիսա Արենի Գևորգյանի «Տնտեսական հարաբերությունների զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում թվային փոխակերպումների պայմաններում» թեմայով (ղեկավար տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյան) ատենախոսության շրջանակներում կատարվող աշխատանքը համակցվել է 2024 թ. հոկտեմբերին ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2024» «Տնտեսական հարաբերությունների թվայնացման խնդիրները ՀՀ-ում» թեմայով ծրագրի շրջանակներում իրականացվող հետազոտական աշխատանքների հետ: Ատենախոսության 2 գլուխները գտնվում են ավարտման փուլում, 2 հոդված տպագրման փուլում են՝ միջազգային ինդեքսավորում ունեցող գիտատեղեկատվական շտեմարաններում: Հետազոտական աշխատանքների արդյունքների հիման վրա ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում կազմակերպված «Փոխակերպվող տնտեսություն» միջազգային գիտաժողովում ներկայացվել է զեկույց «The Impact of Digitalization on Economic Growth: Evidence from an Upper-Middle-income Country» թեմայով: 2025 թ. դեկտեմբերի 1-5-ը ՌԴ գիտության և բարձրագույն կրթության նախարարության, ՀՀ ԿԳՄՍ նախարարության և Ռուս-Հայկական համալսարանի կողմից կազմակերպված 19-րդ միջազգային տարեկան գիտաժողովին հետազոտական աշխատանքների արդյունքների հիման վրա ներկայացվել է զեկույց «Digitalization and Economic Growth: A Cluster-Based Study» թեմայով: Ընթացիկ տարում մասնակցության հրավեր է ձեռք բերվել հետևյալ գիտաժողովներին **1.**The 65th ERSA Congress (“Global Challenges and Regional Responses in a Transition Era”) - Բուլղարիա, Սոֆիա (օգոստոսի 25-28, 2026), **2**. 47th Annual Scientific Conference of ALSRe (“Regions Between Innovation and Sustainability: The Challenges for Development Policies”) - Իտալիա, Ֆլորենցիա (հունիսի 24-26, 2026): 2025-26 ուստարվա 2-րդ կիսամյակում ասպիրանտը հանդիսացել է պրոֆեսորի օգնական, տարեկան ծանրաբեռնվածության

շրջանակում դասավանդել է «Մենեջմենթ» և «Մարքեթինգ» դասընթացների սեմինար պարապմունքները:

Տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյանը հայտնեց, որ Սիլվիա Սարգսի Սարգսյանի «Մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրները ՀՀ աշխատաշուկայի վերափոխման պայմաններում» թեմայով (ղեկավար տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյան) ատենախոսության շրջանակներում կատարվող աշխատանքը համակցվել է 2024 թ. հոկտեմբերին ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2024» «Մարդկային կապիտալի զարգացման հեռանկարները ՀՀ-ում աշխատաշուկայի վերափոխման պայմաններում» թեմայով ծրագրի շրջանակներում իրականացվող հետազոտական աշխատանքների հետ: 1 հոդված գտնվում է խմբագրման փուլում: 2025-26 ուստարվա 2-րդ կիսամյակում ասպիրանտը հանդիսացել է պրոֆեսորի օգնական, տարեկան ծանրաբեռնվածության շրջանակում դասավանդել է «Մենեջմենթ» և «Տնտեսության պետական կարգավորում» դասընթացների սեմինար պարապմունքները:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

2. Դեկան Կ. Խաչատրյանը մատնանշեց, որ Կառավարման և գործարարության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտները հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել են պահանջվող որակով և ծավալով, ինչը բավարար է ատեստավորման համար և առաջարկեց՝ Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

1.2 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 20.05.2026թ. թիվ 12 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտների կատարած աշխատանքը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Միհրան Վախթանգի Սիսակյանի (1-ին տարի), Ալիսա Արենի Գևորգյանի (2-րդ տարի), Սիլվիա Սարգսի Սարգսյանի (2-րդ տարի) կատարած աշխատանքները համարել բավարար և ատեստավորել:

Կառավարման և գործարարության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտները ատեստավորվեցին՝ միաձայն քվեարկությամբ (25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

1.3 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման մասին հարցը:

1.3 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա. Խառատյանը՝ նշելով, որ ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտները երկուսն են՝ Թիրաբյան Տիգրանուհի Վարուժանի (3-րդ տարի), Բաբայան Արման Մանվելի (2-րդ տարի):

Տ.գ.թ., դոցենտ Ա. Խառատյանը հայտնեց, որ Տիգրանուհի Վարուժանի Թիրաբյանը «Ֆինանսական ռիսկերի կառավարումը ժամանակային շարքերի և մեքենայական ուսուցման մեթոդների կիրառմամբ» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Գևորգյան) ատենախոսության շրջանակներում շարունակել է իրականացնել աշխատանքներ ֆինանսական ռիսկերի կառավարման, ժամանակային շարքերի, մեքենայական ուսուցման և ֆինանսական թվային միջավայրերում օգտատերերի վարքագծի վերլուծության ուղղություններով: Իրականացրել է 3 գիտական հոդվածների հետազոտական աշխատանքներ: Մասնակցել է HCL+L լաբորատորիայի հետազոտական աշխատանքներին՝ ներառյալ լաբորատոր հանդիպումները, նախագծերի պլանավորումը, մեթոդաբանական քննարկումները, հետազոտական աշխատանքների ամփոփումը և ընդհանուր կազմակերպչական աշխատանքները: Լաբորատոր աշխատանքների շրջանակում ներգրավված է եղել նաև սարքավորումների (Eye Tracker, EEG, Shimmer) և փորձարարական ենթակառուցվածքների նախապատրաստման գործընթացում՝ դրանց կարգաբերման, փորձարկման և հետագա հետազոտական կիրառման նպատակով:

Տ.գ.թ., դոցենտ Ա. Խառատյանը հայտնեց, որ Արման Մանվելի Բաբայանի «Մուլտիմոդալ մոդելների կիրառությունը դասընթացների արդյունավետության գնահատման խնդիրներում» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Գևորգյան) ատենախոսության շրջանակներում իրականացվել է ատենախոսության համար անհրաժեշտ տվյալների հավաքագրում: Մեկ հոդված ուղարկվել է Scopus գիտական շտեմարան տպագրության, ևս մեկը շուտով կուղարկվի: Մասնակցել է ասպիրանտների համար նախատեսված դասընթացներին և կուտակել է հիմնական առարկաներից 12, կամընտրականներից՝ 18 կրեդիտ:

2. Հարցեր հնչեցրեցին տ.գ.թ., դոցենտ Գ. Հայրապետյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ. Սահակյանը՝ 3-րդ տարվա ասպիրանտ Տ. Թիրաբյանի 3 գիտական հոդվածների շարունակվող հետազոտական աշխատանքների,

նաև դասավանդման աշխատանքներում ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտների ներգրավվածության առնչությամբ:

3. Ասպիրանտ Տ. Թիրաբյանը հարցին պատասխանելով նշեց, որ հետազոտական աշխատանքները հետաձգվել են լաբորատոր սարքավորումների երկարաձգված գնման գործընթացի պատճառով և որ ներկա պահին 3 գիտական հոդվածների մասով հետազոտական աշխատանքներն ակտիվ փուլում են: Հավելեց, որ որպես դասավանդող ներգրավված է «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական կրթական ծրագրի աշխատանքներում:

4. Տ.գ.թ., դոցենտ Ա. Խառատյանը հարցադրումներին արձագանքելով նշեց, որ ասպիրանտ Ա. Բաբայանը ևս ակտիվորեն ներգրավված է դասավանդման աշխատանքներում և մատնանշեց, որ Ա. Բաբայանը հանդիսացել է 2026 թվականի փետրվար ամսին Սլովենիայի մայրաքաղաք Լյուբլյանայում կայացած International AI Olympiad (IAIO) 2026-ի հայաստանյան թիմի ղեկավարը:

5. Դեկան Կ. Խաչատրյանը ընդգծեց, որ պետք է ասպիրանտների ինտեգրման մասով ակտիվ աշխատանքներ տարվեն՝ նրանք պետք է մասնակցեն ամբիոնի նիստերին և ֆակուլտետի նախաձեռնություններին: Հավելեց, որ նախատեսվում է տարեկան մեկ անգամ ասպիրանտների հաշվետու գիտաժողովի կազմակերպում՝ նրանց կատարած հետազոտական աշխատանքների բովանդակային քննարկումն առավել արդյունավետ կդարձնի հետագա աշխատանքը:

Դեկան Կ. Խաչատրյանը մատնանշեց, որ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտները հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել են պահանջվող որակով և ծավալով, ինչը բավարար է ատեստավորման համար և առաջարկեց՝ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա. Խառատյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

1.3 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 19.05.2026թ. թիվ 9 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտների կատարած աշխատանքը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Տիգրանուհի Վարուժանի Թիրաբյանի (3-րդ տարի), Արման Մանվելի Բաբայանի (2-րդ տարի) կատարած աշխատանքները համարել բավարար և ատեստավորել:

Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտները ատեստավորվեցին՝ Տիգրանուհի Վարուժանի Թիրաբյան (24 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ), Արման Մանվելի Բաբայան (25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2. ԼՍԵՑԻՆ. Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Աննա Հովիկի Հակոբջանյանի թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու մասին հարցը:

2. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան Կ. Խաչատրյանը նշեց, որ թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվության պահանջները հստակ սահմանված են ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից: Օրակարգի 2-րդ հարցի քննարկումը սկսելու համար ձայնը փոխանցեց գիտական խորհրդի քարտուղար, տ.գ.թ., դոցենտ Հ. Մարգարյանին:

2. Գիտական խորհրդի քարտուղար Հ. Մարգարյանը նշեց, որ Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Աննա Հակոբջանյանի գիտական գործունեությունը բավարարում է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվության ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներին: Ընդգծեց, որ Կառավարման և գործարարության ամբիոնի 20.05.26թ. թիվ 12 նիստում, միաձայն քվեարկությամբ, որոշում է կայացվել. միջնորդել ֆակուլտետի գիտական խորհրդին՝ երաշխավորելու ամբիոնի վարիչ, դոցենտ, տ.գ.թ. Աննա Հակոբջանյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու համար:

3. Դեկան Կ. Խաչատրյանը նշեց, որ տարեցտարի ֆակուլտետում ավելանում է ատենախոսության ղեկավարման իրավունք ունեցող գործընկերների թիվը, ինչը նպաստում է գիտահետազոտական ներուժի աճին՝ խթանելով դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում ստանալու գործընթացները:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

4. Դեկան Կ. Խաչատրյանը, ամփոփելով քննարկումը, առաջարկեց՝ քվեարկությամբ երաշխավորել Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Աննա Հովիկի Հակոբջանյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու համար:

2. ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 20.05.26թ. թիվ 12 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ երաշխավորել տ.գ.թ., դոցենտ Աննա Հովիկի Հակոբջանյանին Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու համար՝ քվեարկության 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով:

Դիմել ԵՊՀ ռեկտորին՝ միջնորդել ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Աննա Հովիկի Հակոբջանյանի թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու համար:

6. Ընթացիկ հարցեր

6.1 ԼՍԵՑԻՆ. Մագիստրոսական թեզերի պաշտպանության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում ծրագրի ղեկավարի ներառման մասին հարցը:

6.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Ֆակուլտետի մագիստրատուրայի «Ֆինանսներ» կրթական ծրագրի ղեկավար տ.գ.թ., ասիստենտ Կ. Սահակյանը մտահոգություն հայտնեց՝ նշելով, որ մագիստրոսական թեզերի պաշտպանության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկված չլինելու պատճառով ներկա չի եղել պաշտպանությանը: Հավելեց, որ ծրագրի ղեկավարը ամբողջ տարի աշխատում է ուսանողի հետ և պետք է մասնակցի պաշտպանությանը՝ ձայնի իրավունքով և հարց հնչեցրեց՝ հանձնաժողովի կազմի ձևավորման առնչությամբ:

2. Դեկան Կ. Խաչատրյանը հայտնեց, որ գործող կարգի համաձայն՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմը ձևավորվում է դեկանի առաջարկով, հաստատվում՝ ռեկտորի հրամանով: Հանձնաժողովի անդամների կեսը՝ այդ թվում և նախագահը, պետք է լինեն հրավիրյալ, մյուս կեսը՝ ֆակուլտետի ներկայացուցիչներ: Հավելեց, որ 2025-26 ուստարվա «Ֆինանսներ» մագիստրոսական կրթական ծրագրի (1 տարի) ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը կազմվել է ըստ կարգի և ներկայացրեց հանձնաժողովի կազմը: Նշեց նաև, որ պաշտպանության գործընթացը հրապարակային է, ուստի անկախ այն հանգամանքից, որ ԿԾ ղեկավարը հանձնաժողովի կազմում ընդգրկված չի եղել, կարող էր ցանկացած պարագայում ներկա գտնվել թեզերի պաշտպանությանը:

3. ՈՐՈՇԵՑԻՆ.

Ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյանի պարզաբանումը քննարկվող հարցի կապակցությամբ ընդունել ի գիտություն:

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ